

ի ձեռք մեր, և բովայնալ մեր իբր գնատուածաւ տուր պատգամս Մովսիսի, ցուցցուք պատրոցմ թիրևս սակաւ մի կասեցցիմ յատելութիմէ քրիստոնէից. եւ ճէրդ մեր ըմկայցիս վարձս ի վարձատուէմ բուրեցեղանց. նաև շնորհիլ մաղթեմք հեղեղիցիմ Հայոց որ ի զինեմորի, քամգի ողորմելի ազգմ հայոց որք ամղր՝ եմ առամց հաղորդու թեամ և ամեմայմ խորհրդոց.

Եւ ի վախճմաբի բամբս, և զայս ևս գիտացե՛ք մեծապատիւ գիտութիւնդ, յերկրէմ ձեղկաց . և յերկրէմ օսմանցուց և յօղբեգաց ղեսպամք յուլովք զամ յաշխարհս մեր, ոչ միում յումեքէ կրեմք վմաս և մեղութիւմ, քայց յամեմայմ եկեղեց ֆուսմկաց ղեսպամաց մեղութիւնս և վմաս յուլիս կրեմք, յողոք ամկեալ խմղրիմք և զայս, ոչ թողացուցանել լիմիլ այսպէս. Գետակամ գրուիսդ և հասարակաց քրիստոնէից հայրդ կեցցես և մմասցես ողջ և առողջ ի փստս մեծագոյմ Աստուծոյ և ի պարծամս եկեղեցւոյ ամէմ.

Գրեցաւ ՌժՅԸ Թովմ, փետրվարի ամսոյ ին, ի Սուրբ Էջմիածին».

Սոյն այս թուղթ առաքեցաւ ի Հոռվմ ձեռամբ Յովակիմ վարդապետի Նոր-Ձուղայեցւոյ:

(Շարունակելի)

ՄԵՐՈՒՆ Զ. ՍԵՔՍԿՅ

ՊԱՐՍԿԱՅԱՅ ԱՇՈՒՂՆԵՐ

ԱՇՈՒՂ ՅԱՐԹՈՒՆ ՕՂԻ

(Նրա մահուան Յիսակումակի ասիրով)

(Շար. տես 326)

IV.

Յարթուն օղլն «Դավթարը»

Յարթուն օղլն թողել է մի «Դավթար», որի մէջ նա ամփոփել է իր երգերը: Այդ «Դավթարը», որ մեր ինդրանքի համաձայն սիրով ուղարկեց մեզ Չահար մահալ գաւառի Մամուլա գիւղից Արշամ քահանայ Անդրէասեանը՝ հին կաշեկազմ է և անզարդ: Մեծութիւնն է 21 16 սանտիմետր: Բաղկացած է 60 թղթից, որոնցից ութը դատարկ է: Խրաքանչիւր երեսը բաղկացած է 24-32 տողից: Հանգամանքը շատ խեղճ է. շատ գործածելուց և ձեռքից ձեռք անցնելուց՝ թերթերը

մաշակ են, դեղնել և կեղտոտել, շատ թերթեր էլ առջկից, միջից և ետեւից պակասում են. իսկ ամբողջ «Դավթարը» մէջտեղից կէս պատռած է: Երգերը գրւած են հաստ և մեծ բուրբաղով, որոնք սակայն խառնիխառն են և անհաշակ: Պարունակում է ընդամենը 100 երգ, որից 35-ը հայերէն է, իսկ 65-ը՝ թրքերէն: Սկզբում գրւած են հայերէն երգերը, յետոյ զայիս են թրքերէն, և ապա նորից հայերէն երգերը: Մենք նրանց դասաւորելով՝ բաժանեցինք մի քանի տեսակների՝ սիրային, դարբի, կրօնական, խրատական, երգիծական և այլն:

Այն երգի վերջում՝ ըստ ընդունած սովորութեան՝ յիշատակւած է երգչի անունը. սակայն դավթարում նշանակւած է երգերի յօրինման թւականը: Բացի այդ՝ երգերի մէջ բազմաթիւ են ուղղագրական և այլ սխալները, օրինակ՝ բարով-բարով, անոշ - անուշ, հէկէկալ-հեկէկալ, վարթ-վարդ և այլն: Մենք յարմար համարեցինք այդ սխալները հրատարակել անփոփոխ, այսինքն՝ այնպէս, ինչպէս որ գրւած են դավթարում: Այժմ այդ դավթարը գտնւում է Մամուլա գիւղում՝ երգչի թոռան մօտ:

V.

Յարթուն օղլու երգերը

Այժմ տեսնենք աշուղական այն քնարը՝ որ երգիչը նիւրել է իր ազգին: Այդ քնարը բաղկանում է եօթը լարերից. սիրային, դարբի, կրօնական, խրատական, հարսանեական, երգիծական, ալլաբանական (ալլեգորիական): Նրանց արժէքը լաւ ըմբռնելու համար՝ պէտք է ծանօթ լինել աշուղական արեւստին, լեզվին և նա մանաւանդ այն գաւառաբարբառին՝ որով արտայայտւել է երգիչը: Դա բանասիրութեան տեսակէտից խիստ անհրաժեշտ մի պահանջ է:

Ճիշդ է որ այդ երգերը գեղարւեստական տեսակէտից թերի են և չունին ոչ

պարսիկ երևելի բանաստեղծների՝ Հաֆթ-զի, Սաադիի, Նիզամի, Էնվերի, Բուսթի երգերի հմայիչ գեղեցկութունն ու սիրա-գեղութիւնը, և ոչ էլ մեր միջնադարեան տաղերգուների՝ Նահապետ Փուշակի, Մը-կըրտիչ Նազալի և Յովհաննէս Թիկու-րանցու գերթածներէ զգացումների խորու-թիւնը, սակայն և այնպէս իրենց պարզ արտաքինով և ժողովրդական ոգով՝ հե-տաքրքրական են և արժանի առանձին ուսումնասիրութեան:

Այդ երգերից ամենարժեքաւորը սի-րային և կրօնական մօտիւներն են, որոնց մէջ պատկերաւորութիւն է երգչի զգայուն սի-րոյ սիրտն ու հոգին: Միւս երգերը թէև թոյլ, բայց դարձեալ արժեքաւոր են իրենց բովանդակութեամբ, Այժմ ծանօթանանք իւրաքանչիւր մօտիւի հետ:

1. Սիրոյ երգեր

Իբրև երգիչ՝ Յարթուն օղին ունի իր առանձնայատուկ երազների, յոյսերի և յազգերի, իդէալների և զգացումների հա-րազատ աշխարհը: Դա սիրոյ աշխարհն է, ուր նա այլազան դուազներով և գոյն-երով երգում է իր սիրած եարին, գո-վում է նրա գեղեցկութիւնը: Այդ երգերից երեւում է, որ նրա սիրած եարն աննման է, չկայ «գեօզալների» մէջ նրա նմանը: Աւելին: Եարը նրա ամբողջ կեանքն է, ամբողջ երջանկութիւնը: Եւ նա համակ-ւած սիրոյ վառ զգացումով՝ լարում է իր քնարը, զարկում նրա լարերին և սիրա-բաղիւ կանչում է իր աննման եարին:

«Կամենոք արբէշում, ֆիթաթ գառով քաղած,
Գլուխդ պատուական ոսկէ սանդուղ տալած.
Իմ եար, արի, արի բարով, հազար բարի,
Խնդանք իրուր խտուր՝ չուր հարիւր տաս տարի»:

Անուհետեւ երգիչը, Ղուլ Յովհաննէսի և Բաշէր օղու նման, արեւելեան վառ գոյներով գծում է իր սիրածի պատկերը-գեղեցիկ են նրա շրթունքները, ունքերը՝ հիւսիս, աչքերը՝ սև, ականջները՝ գուլաւ, թշերը՝ կարմիր վարչ-նոսագոյն, երեսը՝

ճերմակ ծով, լեզուն՝ բլբուլ, կուրծքը՝ մարմար, մէջքը՝ բարակ, չկայ հողեղէն-ների մէջ նրա նմանը:

«Թիկունքդ թախտ աղիւղ, ինչ աննման ես դու,
Զըկայ հողեղէնում, հուրի զլման ես դու.
Մէջքդ բարակ լիանանչ՝ սալբրոզման ես դու,
Գեօզալների միջում՝ սուլթան ու խան ես դու»:

Եարի աննման այդ գեղեցկութիւնը գե-րում է երգչի խելքը, սիրտը կաշկանդում, ձգում է սիրոյ երապի մէջ, և նա սիրոյ զգացումների բուռն թափով գեղուն՝ երգեր է հնչեցնում, սիրաբորբոք, խանդավառ երգեր:

«Քաղցր լեզուդ երբ խօսում ա,
Սիրտս էրում ա կրակի պէս...
Աչքերդ սիրտս ա կտրատում,
Սրած ալմասէն շուշի պէս:

Ունքներդ խելքս ա տանում,
Թմրացնում ա մախշուշի պէս.
Փըցում ա ինձնէ բիխաբար,
Թուլացնում ա բիյուշի պէս»:

Եւ նա օրհնում է այն հօրն ու մօրը, որ ծնել են այնպէս մի աննման եար:

«Քո հօրն և մօրն ուսմամթ՝
Որ ծնագեցան քեզ պէս նահմամթ»:

Ու սիրոյ կրակը երգչի հոգու մէջ օրէց օր արծարծւում, հղիւն է դառնում և նա կրտսալայի ոգևորութեամբ հնչեցնում է սիրոյ երգն աւելի ուժգին:

«Աչքերդ ինձ խափ ա տալիս,
Սրտիս մէջն ծափ ա տալիս.
Միտս ոսկոռքէս թափ ա տալիս՝
Էդ քո խաղալն, նազելի:

Ունքներդ մախշուշ ա բերում,
Կտրած սիրտս շուշ ա բերում.
Բիյուշ մարդին յուշ ա բերում՝
Քո բարե տալն, նազելի»:

Բայց երգիչն զգում է, որ եարն օտա-րացել, մի «վայրենի դուշ» է դառել,

զգում է որ նետով իր « ջիգարին » է տալիս, և նա սրտայոյզ շիշտերով գանձատուում է անգուլթ հարից :

« Էլ չես մտիկ անում հալիս, հետով ջիգարիս աս տալիս. ինձնէ երկար ման ես գալիս, Մին վայրենի դուռ աս էլի » :

Էլ երգիչը՝ այնուհետև թախծոտ սրտով ձեռք է առնում սազն ու պանդխտութեան գնում, որպէս զի իր վիշտն ամոքելի. բայց ի զուրբ. օտար աշխարհում էլ նա հանգիստ չունի, ետքի սէրը տանջում է նրան :

« Քանի քեզնէ հեռացել ամ, էլ հալ ու օղվաթն չունեմ. Սրտովս քեզ կամեցել ամ, Իրուշի թնաթն չունեմ » :

Քեզի նման հայոց ցեղում,
Զեմ գտանում գաւառ զեղում.
Զեմ դիմանում դարիբ տեղում,
Առանց քեզ թաղաթն չունեմ » :

Էլ նա հարից հեռու, միայնակ, վրշտերի մարմաջով թաթախուն, կարօտագին սիրտն է բաց անում հարին և խնդրում, որ այլ ես մի ճար անի.

« Սիրոյդ ձեռնէն ցաւտեւ ամ,
Մի տալ դարդ ու սար ինձ, աղջիկ.
Տեսող համար կարօտել ամ,
Ե՛կ դու, արա ճար ինձ, աղջիկ » :

կամ՝

« Խօսում ամ, խօսում ամ, դէ չեմ չես խօսման,
Ախր ջնաթն ի՛նչ ա, ջնան, քեզի դուրբան.
Էշխցիդ ամ կրակովում, մագեար չե՞ս տեսման,
Տէ՛ս, մին դարդիս համար բա՛մ քեզի դուրբան » :

Վերջապէս ետքը խղճում է երգչին և նրա հետ ամուսնանում : Երգչին անհուն երջանկութեան հասած՝ գովում է ետքին : Նրա ետքը « բարի պտղաբեր մի ծառ է », որին նա պահում — պահպանում է զուր-

գուրանքով և նրա համար ամեն ինչ « մատաղ » անում :

« Դու բարի պտղաբեր ծառ իր,
Էդ քո փառ ու բալին մատաղ.
Քեզ երանի, որ ինձ առիր,
Էդ նման աղբալին մատաղ » :

Այժմ գուլալ, ունքդ կամար,
Կոյս երեսդ շամս ու դամար.
Զոյգ միասին կապած կամար,
Սև հիւլալ ունքերիդ մատաղ » :

Սիրային այս երգերի մէջ հարազատու-
թեամբ պատկերացում է երգչի քնքոյշ,
ազնիւ սիրտն ու նրա անկեղծ և զգայուն
հոգին, և նրա բոլոր սիրային երգերի մէջ
դուրք կը գտնէք այդ նոյն անկեղծ և ըզ-
գայուն ոգին : Ահա սիրային մի այլ նմուշ :

« Ունքերդ ինձ կեռացնում ա,
Աչքերիդ ջամին դուրբան ամ.
Զորցած սիրտն թողացնում ա,
Երեսիդ նամին դուրբան ամ » :

Էլ այսպէս մի շարք սիրային երգեր
ունի Յարթուն օղին, մէկը միւսից աւելի
անկեղծ և զրաւիչ, որոնց մէջ երևան է
գալիս նրա բանաստեղծական ձիրքը և
արտայայտելու կարողութիւնը :

2. Ղարիպի երգեր

Բացի սիրային երգերից, Յարթուն օղ-
լին ունի նաև մի քանի պանդխտութեան
երգեր, որոնցից միայն մէկն ունինք մեր
ձեռքի տակ : Նրա մէջ, երգիչը սրտառուչ
չեղտով նկարագրում է զարբի թշուառ
դրութիւնը, որ դարիք — զուրբար աշխար-
հում « վաթանից թառ ընկած զլի նման », ոչ
մի տեղ միութարութիւն չունի, մինչև
անգամ՝

« Ղարիբ մարդս՝ եթէ ծաղկած ծառ էլներ,
Մաշխտներում կանթեղի պէս վառ էլներ,
Գողթն թրմաշալ ու կապէն գառ էլներ,
Իրա համար քանգած բաշի նման էր » :

Ղարկպութեան մէջ նրա համար ամէն ինչ « հարամ լաշի նման է », նրա աչքին ամէն ինչ դառն է, նոյն իսկ

« Ղարիբ մարդս՝ եթէ որդւոյ տեղ սիրես, Ախիրն մին խօսքով իւր սիրտն կերես ».

Աւելին՝ Օտար երկրում, զարիբ մարդը մի ծառայ է, որի առաջը եթէ խաղաս, խնդաս, ծիծաղես, էլի նրա համար « Զար-դաշի » նման է, որովհետեւ՝

« Ղարիբ մարդուս՝ սիրտն քանդած աւեր է, Առէջկուռն գետեր, ծովեր, նաւեր է ».

Եւ այդպէս զարիբը՝ սիրտն աւեր, խեղ-ըր գլխիցը թռած, աչքերը արտասուքով լցւած, ախ քաշելով օրերն է մթնեցնում:

3. Կրօնական երգեր

Թարթուն օղու երգերի մէջ նշանաւոր տեղ են բռնում նաեւ կրօնական մի քանի բանաստեղծութիւնները, որոնց մէջ նա, միջին զարեւրի միտքի բանաստեղծ՝ Գրի-գոր Նարեկացու ջերմեռանդութեամբ և ջերմ հայցածքներով աղօթում է Աստծուն և ապաշխարելով իր մեղքն է լալիս.

« Վայ ինձ, վայ իմ գործին, վայ իմ մեղացն, Յոսապեւ ամ չարին, մեղայ քեզ Աստուած. Զունեմ մին զզջալի արտասուս լացն, Մոռացել ամ բարին, մեղայ քեզ Աստուած »:

Այսպէս նա իրեն շատ մեղաւոր է հա-մարում, դիմում է Քրիստոսին և արտա-սալից թողութիւն է աղերսում.

« Լոյս Քրիստոս, քեզ ունիմ յոյս,
Եւ դու ողորմաս ինձի, Տէր.
Չար անիրաւ մեղուցելուս,
Դու թողութիւն տաս ինձի, Տէր »:

Թողութիւն տաս իմ մեղացն,
Ճշդում արտասուս և լացն.
Շնորհիս անմահութեան հացն,
Դու տաս քո սուրբ մասն ինձի, Տէր »:

Մի այլ տեղում ողբում է Քրիստոսի գերեզմանի վրայ. իսկ մի ուրիշ տեղում նա երգի նիւթ է շինում Յովհաննէս Մը-կրտչին:

Բաց ի սրանցից՝ Թարթուն օղին թողել է 127 տնից բաղկացած մի գողտրիկ գրաբառախառն ոտանաւոր, որ կրում է « Տաղ արարչացործոյքեան աշխարհի կամ հոմասօտ պատմութիւն Աստածաշունչ ստորք ցրոց » վերնագիրը, որով նա մեզ տալիս է Աստածաշունչի համասօտ պատմութիւնը, սկսելով աշխարհի ստեղծագործութիւնից: Այդ ոտանաւորից երևում է, որ Թարթուն օղին տեղեակ է եղել նաեւ Ս. Գրքին, որից նա նիւթեր է վերցնում և երգեր հիւսում:

4. Խրատական երգեր

Ուշագրաւ են նաեւ Թարթուն օղու խրատական երգերը: Նա իր խրատներով խորհուրդ է տալիս « աղամորդուն », որ ինչ ասպարիզում էլ լինի՝ միշտ ուղիղ սրտով գործի, յիշելով Աստծուն: Նոյնպէս խրատում է՝ լինել մտքով զօրեղ, սրտով « պայծառ », խօսքով ընտիր, լեզուով հա-մեղ, ինչպէս մի հեզ գառ: Երգիչն ասում է, որ մարդ պիտի « յամէն մաջլխում, կանթեղի նման շողշողայ », որպէս զի « տեսնողն սարսափի, դողայ » . հար-կաւոր է նոյնպէս, որ մարդ, որտեղ էլ որ լինի, խոնարհ կենայ, մտածի և իր բերանը « քաղցրիկ բանից » ու « իմասայ խօսկի քաննն », որպէս զի ամէն մարդու « խօշ »ը գայ . սուտ խօսքը, կեղծիքը շուտով մարդուն « գետին կու տայ » . մի խօսքով՝ պէտք է « մարդս հէքիմ ընի ուր զարդին, որպէս զի մուհթաջ շմայ նամարդին »:

Ապա խօսում է աշխարհիս ունայնու-թեան մասին. երգիչն ասում է — այս աշխարհում, մենք բոլորս որ կանք՝ մի օր պէտք է մեռնենք, մեր « հոգին մարմնից մին օր պէտք է բաժանուած »: Ուստի խորհուրդ է տալիս մարդին բարի գործել, աղքատներին օգնել և Աստծուն աղօթել:

5. Հարսանեկան

Յարթուն օղու երգերի մէջ կան նաև մի քանի հարսանեկան երգեր, որոնցից յայտնի են « Խեղրում սմ պարոններէն », « Օրհնոթիւն հարսանեաց » և « Հրաժեշտ հարախ » վերատառերով քերթածները . առաջինի մէջ երգիչն օրհնում է հարսու և փեսայ կեանքը և նրանց տուն և տեղը . երկրորդով օրհնում է հարսանեկան հանդէսը . իսկ երրորդի մէջ նորահարսը հրաժեշտ է տալիս հայրական տանը և իր սիրելիներին :

6. Երգիծական

Երգիչը թողել է նաև երգիծական մի քանի ոտանաւորներ, որոնք թէև տեղ տեղ անհամ են, բայց սոյն են տալիս գեղջկական սրամտութիւն . զրանցից մէկի մէջ նա կատակելով գանգատում է իր ուլի մասին .

« Է՛յ պարոններ, մին ուլ ունի գետտո էր,
Մին պտուկն քօս էր, մինն կաթ չունէր .
Ձանն էր քաչալ, հէնց գիտէի գառոտ էր,
Ոտն խօ չօլախ էր, ձեռն էլ քեաթ չունէր :

Մարզ երթէր կթելու, պէտք էր մոտծէր,
Թէ էտուր կաթն նա ռոտեղ կածէր .
Համ քացի կը զցէր, համ էլ կըխածէր,
Սօյից շատ նաջիւմ էր, ափսոս գաթ չունէր » :

Այս ոտանաւորը յիշեցնում է մեզ 19րդ դարի աշուղ՝ Աղբարը—Աղամին, որը ծաղրօրէն գանգատում է իր այծից .

« Փո՛ղ եմ տուել, տուն չի գալիս չալ էծը,
Խօսեցնում եմ, հէ՛շ չի խօսում լալ էծը :
Է՛յ հազարաթ, ի՛նչ չի գառաւ մալ էծը,
Իմ գլուխս բերեց գալմաղալ էծը :
Փախաւ գնաց ինձ տուեց թալ էծը,
Կոշայ հանդին խիստ լաւ կոսեց կալ էծը » :

Ուլից յետոյ՝ Յարթուն օղին երգիծաբանութեան նիւթ է դարձնում իր աշակերտ՝ Ալաւազէրդի աշուղին : Նա Յարթուն օղուց գաղանի մի ոտանաւոր է շարա-

ղում և համարձակում է հարսանիքում նրա ներկայութեամբ երգել՝ առանց նրանից արտօնութիւն ստանալու . դրա վրայ Յարթուն օղին ձեռք է առնում չօնգտարը և յանպատրաստից երգում է այսպէս .

« Ջարմացել սմ էօ աշխարէն,
Թէ ինչպէս աշխար ա էլել .
Քուլուզն չէ վախման քարէն,
Խառ մօհրէն զօվհար ա էլել :

Էդ թողէք, ասեմ յիրուշն,
Վարթին չէ հօվանուս փուշն .
Աներևոյթ բայիզուշն,
Բլբուլին համքար ա էլել » :

7. Միւս երգերը

Յարթուն օղու միւս երգերից ուշադրութեան արժանի են երեք այլաբանութիւնները, որոնք տաղաչափական տրամախօսութիւն են « Հոգոս և մարմնի », « Երկնքի և գետնի », « Համամի և շաղացի » : Ունի նաև 65-ի չափ թրքերէն երգեր, որոնցից հետևում է՝ որ նա քաջ ծանօթ է եղել թուրքերէնին և զիտէր արեւելեան տաղաչափութեամբ երգեր յօրինել :

Թուրքերէն լեզուով երգեր յօրինելու սովորութիւնը, որ արդիւնք է ժամանակակից կեանքի արտաքին և ներքին պայմանների՝ մեր աշուղական գրականութեան մէջ մի նոր երևոյթի չէ :

Մեր միջնադարեան աշուղների մէջ կան մի քանի երգիչներ, որոնք իրենց զգացմունքներն ու հայեացքները թուրքերէն լեզուով են երգել, ինչպէս օր. Քէշիշ օղլի, Ալաւազէրդի : Նոյնպէս քնարերգակ Սայեաթ Նովան իր աշուղութիւնն սկսել է թուրքերէն խաղեր յօրինելով և յետագայում միայն հայերէն է գրել . « հիմի գուզեմ թէ հայէվար սարմ » : Թուրքերէն լեզուով երգել յօրինել են նաև Յովհաննէս Թլկուրանցի, Գրիգորիս Աղթամարցի և ուրիշներ : Յարթուն օղին էլ հետևել է իր նախորդների սովորութեան :

ԼիզուՆ ԵՒ ՈՏԻՐ

Յարթուն օղլու երգերը զրւած են անտաշ հայերէնով. նրանք ողողւած լինելով թրքերէն և պարսկերէն բառերով և արտայայտութիւններով՝ դժարահասկանալի են դառնում, բայց և այնպէս այդ անողորմ լեզուն կրում է իր մէջ ժամանակի յատուկ ժողովրդի խօսակցութեան կնիքը և մասնաւորապէս Նոր-Ջուղայի և Չահարմաշի բարբառի գեղեցկութիւնը:

Նրա ոճը սահուն է և կոկիկ, իսկ երգերը ձեռի, կազմութեան և տաղաչափութեան արեւստի տեսակէտից բաւական յաջող են:

ԴԵՐԸ

Յարթուն օղլին որոշ դեր է կատարել իր ապրած միջավայրում: Նա իր երգերի մօտիներով ազդել է պարսկահայ մի քանի աշուղների վրայ: Նրա անմիջական ազդեցութեան ներքոյ կազմակերպւել է աշուղ Ալլահադէրդին: Այդ ցոյց են տալիս Յարթուն օղլու և Ալլահադէրդու երգերու մօտիները: Յարթուն օղլու քնարիք ներշնչւել է նաև երգիչ Տէր-Կարապետ Օհանեանը: Նա իր դաժարում Յարթուն օղլու մասին գրում է այսպէս. « 1840 թիւն Յարթուն օղլի Յովաննէսն զօրացաւ, որ էր յոյժ ընտիր բանաստեղծ աշուղ »: Յարթուն օղլուց որոշապէս ազդել են նաև երգիչ Մարտիրոս Մանուկեան, աշուղ Մսկին Ստեփան և Մսկին Մատթէոս: Վերջին երկուսը մինչև օրս էլ դեռ երգում են նրա երգերը:

Բացի վերոյիշեալ ազդեցութիւններից՝ Յարթուն օղլին իր երգերով ազդել է նաև իր ժամանակակիցների սրտի և հոգու վրայ: Նա երգել է կուսական գեղեցկութիւնը, սէրը, վրձինի պէսպէս գոյնեղով, և արտայայտիչը հանդիսացել իր ժամանակի երիտասարդութեան զգացումներին ու իդէալներին: Նա գրել է նաև կրօնախրատական ոտանաւորներ և իր բարոյական հայեացքներով կրթել ու դաստիարակել իր հայրենակիցներին միտքը և ազնւացնել նրանց սիրտն ու հոգին: իսկ իր այլարանական, երգիծական, հարսանեկան քերթածներով պատկերասրահ ժամանակակից ժողովրդի կեանքն ու ոգին:

Այդ երգերը ժամանակին դարձել են գիւղացիների սեփականութիւն, և բերնից բերան թռչելով՝ երգչի անունը ժողովրդականացրել: Նա առանձին յարգանք ու պատիւ է վայելել իր ժամանակակիցներին: Նրան սիրել ու պատել են իր համագիւղացիները: Սիրել է նրան Նոր-Ջուղայի Ս. Ամենափրկչեան թեմի ժամանակակից թաղէտն առաջնորդը և յաճար նրան ճաշի է հրաւիրել: « Տաղ ի վերայ սեղանդ » երգը յօրինել է նա նման մի հրաւերի առիթով: Նրան սիրել են և պարսիկ խաները: Նա իր քնարի լարերով առանձին փայլ է տւել նրանց խնջոյքներին և վարձատրել առատ նւէրներով: Յատկապէս արժանացել է Սուլէյման խանի առանձին ուշադրութեանը և նրանից նւէր է ստացել: Իր « Ֆիրուզ » մատանին՝ Նոյն պէս նա սիրել է պարսիկ աշխատասրբի գիւղացիներից, որոնք անգիր են արել նրա թրքերէն երգերը:

Մինչև այսօր էլ դեռ Յարթուն օղլու յիշատակը կենդանի է իր հայրենակիցների սրտում: Նրանք ձմեռւայ երկար գիշերները նստած տաք օթախներում, քույրների շուրջ, երգում են նրա երգերը և առանձին հիացմունքով յիշում իրենց սիրելի աշուղին ասելով. « Օղորմի հոգուդ Յարթուն օղլի »:

Եզրափակելով մեր խօսքը Յարթուն օղլու մասին՝ ասենք որ թէև նա մեծ աշուղներից չէ, բայց և այնպէս, իրոք բանաստեղծ-աշուղ, իր երգերի մօտիներով, որոշ ձիւրք է ցոյց տալիս, և այդ տեսակէտով էլ նա իրայատուկ տեղը պետք է բռնէ Հայ աշուղական զրականութեան պատմութեան մէջ:

ԱՐԱՐ ԻՐԵՄԵԱՆ

Վիեննա
(Universität zu Wien)